ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թվականի մայիսի 18-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ «Ա» դասարանի դասարանական և ծնողական համատեղ ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր աշակերտները և ծնողները: Ժողովը վարում էր դասղեկ՝ Իսկուհի Ասատրյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Սովորողների առաջադիմության , պետական ավարտական և միասնական քննությունների օրերի մասին հաղորդում:

2.Վերաքննություն ունեցող (120 և ավելի ժամ բացակայած) աշակերտի ծնողի հետ զրույց:

3.Վերջին զանգի միջոցառման հետ կապված կազմակերպչական հարցեր: Դրամահավաքության արգելում:

4.Սովորողների համազգեստը ,դասարանի սանիտարական վիճակը և գույքի պահպանումը:

Ա. Լսեցին՝

Օրակարգի առաջին հարցը, որի վերաբերյալ ելույթ ունեցավ դասղեկ Իսկուհի Ասատրյանը : Նա ամփոփ ներկայացրեց սովորողների առաջադիմությունը, և նշեց որ ծնողները պետք է հետևողական լինեն աշակերտների առաջադիմության վերահսկման գործում, քանի որ առջևում պետական ավարտական և միասնական քննություններ են:

Իսկուհի Ասատրյանը առանձին զրույց ունեցավ 120 ժամից ավելի բացակա ունեցող աշակերտի ծնողի հետ, պարզեց բացակայության պատճառները և ծանուցեց, որ նա վերաքննություն պիտի հանձնի:

Իսկուհի Ասատրյանը պահանջեց, որ վերջին զանգի հետ կապված որևէ դրամահավաք արգելված է: Նա նշեց, որ վերջին զանգը ընդամենը ավարտական միջոցառում է, որ պետք չէ վերածել չքեղ շոուի:

Դասղեկը հետևողական է եղել հերթապահության, նաճախումների, դասագրքերի և, համազգեստի, նրա պահպանման, ինչպես նաև դասարանի սանիտարական վիճակի

ու գույքի պահպանման հարցում: Պատժվել են նրանք, ովքեր կատարել են կարգապահական շեղումներ, փորձել են խանգարել կամ լքել դասերը:

Անմիջապես տեղեկացվել է ծնողներին ամեն ինչի մասին և դասղեկ-ծնող համատեղ ջանքերով փորձել են հարթել ծագած խնդիրները:

Որոշեցին՝

- Դասղեկի և բոլոր ուսուցիչների կատարած աշխատանքները դասարանում գնահատել բավարար 100 % առաջադիմություն ապահովելու համար:

-Ծնողական խորհրդի նախագահի և անդամների առաջարկությամբ որոշեցին <<Վերջին դասի և վերջին զանգի>> համար գումար տրամադրել դասասենյակի և դահլիճի ձևավորման, նկարահանման և կրծքազարդերին:

-Հետևողական լինել ավարտական քննություններին պատշաճ ներկայություն ապահովելու համար:

Ծնողական խորհրդի նախագահ՝ ---------------- (Ն.Ծառուկյան)

Քարտուղար՝ ---------------- (Ն. Հովհաննիսյան)